ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 40

«23» 04 2018թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի Ն 29 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի հետևյալ կազմը՝ 3 տարի ժամկետով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայկ Ջիվանի Ասլանյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Գրիգորի Անդրանիկի Պողոսյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ

Արսեն Վիգենի Սիմոնյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ

Տիգրան Գուրգենի Ամբարյան -	Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ
Վազգեն Ռուբենի Ռշտունի -	Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
Էդգար Էդուարդի Շաթիրյան -	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ)
Էդուարդ Գագիկի Մելքոնյան -	Իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի նախագահ նշանակելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 25-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29 հրամանը:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ